

Արմեն Ե. Պետրոսյան
Բան. գիյր. դոկտոր

**ՎԱՆԱ ԼՃԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՓԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՀԻՆ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋ***

Բանալի բառեր – Բիաինիլի, Վան, Ուրարտու, Էթիունի, Սյունիք, Վայոց ձոր, Վայկունիք, խեթերեն, Շիվինի:

Մուտք. ընդհանուր պաշտամունքը

Ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստծու անունն էր Տիսուն, որը պիտի որ խեթական փոխառություն լիներ (հմմտ. խեթ. *šiu-* (*šiuini-*, *šiuana-*)՝ «աստված», հնում՝ «արևի աստված», *šiuatt-*՝ «ցերեկ», հնդեվրոպական լուսավոր երկնքի աստծու **dyeu-* անունները:

Այս անունը կա միայն խեթերենում. նույն արմատի արտացոլումները մյուս անատոլիական լեզուներում շատ տարբեր են (հմմտ. լուվիական *Tiuat* և պալայական *Tiyat* դիցանունները): Խեթերենում արևի աստվածը հանդես է գալիս խաթերենից փոխառյալ **Ištanu** անունով, այդ պատճառով էլ ուրարտական դիցանունը կարող էր փոխառվել ոչ թե հենց խեթերենից, այլ նրան մերձավոր, բայց այդ դիցանունը պահպանած մի բարբառից¹:

Շիվինիի պաշտամունքի կենտրոնն էր մայրաքաղաք Վան–Տուշպան: Խեթական և պալայական առասպելներում արևը ծագում է ծովից: Այս փաստերի հիման վրա Վ. Իվանովը կարծիք է հայտնել, որ խեթերի հնագույն հայրենիքը պետք է գտնվեր Կասպից ծովի կամ Ուրմիա և Վան լճերի ափերին, և Շիվինիի պաշտամունքը Վանա լճի արևելքում մատնացույց է

* Հոդվածն ընդունվել է տպագրության 14.05.2021:

¹ Տե՛ս **Diakonoff I. M.**, *Hurrisch und urartäisch*, München, 1971, էջ 81: **Дьяконов И. М.** О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах, «Древний Восток», N 5, 1988, էջ 172: Վ. Իվանովը ուրարտական դիցանունը փոխառված է համարում նախագրային խեթերենից: Տե՛ս **Иванов В. В.**, *Анатолийские языки, Древние языки Малой Азии*, М., «Прогресс», 1980, էջ 131, 136: Սյուն կողմից այս դիցանունը համարվել է խուշիական արևի աստված *Šimigi-*ի ուրարտական զուգահեռը: Տե՛ս **Friedrich J.**, *Aus verschiedenen Keilschriftsprachen 1-2*, *Orientalia IX*, 1940, էջ 217-218: Ըստ Ի. Ղյակունովի դա բացառվում է, քանի որ խուշիերենում և ուրարտերենում չկան **-m-** / **-w-** համապատասխանության դեպքեր, և բնիկ լինելու դեպքում *Šiwina-*ի փոխարեն կունենայինք *Šina-* (*-iwi-* > *i* կանոնավոր սղմամբ): Որոշ ուսումնասիրողներ (Մ. Խաչիկյան, Մ. Սալվինի, Գ. Վիլիելմ), առանց Ղյակունովի առարկության դեմ հատուկ փաստարկներ ներկայացնելու, շարունակում են պաշտպանել Յ. Ֆրիդրիխի տեսակետը, որը պետք է դիտվի որպես խուշուրարտական ազգակցությունը շեշտելու առանձնակի ծգուում:

անում խեթերի բնօրրանի տեղադրությունը, որտեղից նրանք հետագայում տեղաշարժվել են արևմուտք²:

Ուրարտական պետության ձևավորմանը նախորդող դարաշրջանում Վանի շրջանի, ինչպես և գրեթե ողջ Լեռնաշխարհի (բացի հարավարևմտյան որոշ տարածքներից) հնագիտական մշակույթը (բացի հարավարևմտյան որոշ տարածքներից), միասնական էր, նույնական ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքների մշակույթին³, իսկ ուրարտական հագուստի և զենքերի հնագույն ձևերը մոտ էին խեթականներին⁴ (ընդ որում, պետք է հաշվի առնել, որ Խեթական տերությունը կործանվել է Ուրարտուի կազմավորումից շուրջ երեքուկես դար առաջ, ուրեմն նրա ուղղակի ազդեցությունն ուրարտականի վրա բացառվում է): Այսինքն՝ հնարավոր է, որ այն հին՝ էթնիկ ընդհանրության արձագանք է: Իսկ Ուրարտուի «պետական» հնագիտական մշակույթը բացարձակապես այլ է հին տեղականից⁵. ուրարտացիները, այսինքն՝ ուրարտերենով խոսող ժողովուրդը, Վանի շրջան է եկել հարավից, ինչի մասին կխոսենք:

Վանի հայոց հին հավատալիքներում արևը ներկայացվում է որպես հուր մագերով և ոսկե գլխով մի պատանի, որը ծագում է արևելյան լեռներից և մայր մտնում ու քնում Վանա լճում⁶: Սա հիշեցնում է արևի՝ ծովից ծագելու խեթական և պալայական առասպելական պատկերացումը (միայն այս դեպքում արևը ոչ թե ծագում, այլ մայր է մտնում լճում, ինչը պայմանավորված է Վանի՝ լճի արևելքում գտնվելով): Հայկական անվանաբանության մեջ սեպագիր **Šiuini**-ին համադրելի են **սիւ-**/**սև-** հիմքով տեղանունները (և՛ խեթական, և՛ ուրարտական սեպագրում **s** հնչյունը նշանակվել է **š**-ով, իսկ հայերենում **իւ** և **եւ** երկբարբառները հերթագայում են): Այդ անվան հայկականացված տարբերակը կարող էր պահպանված լինել Վանից արևելք Արձիշակ գետի մի վտակի և ամրոցի արդեն X դարից հայտնի **Սեւան** անվան մեջ (այս անվանաձևի հետ հմնտ. խեթ. **Šiuanni**՝ «աստվածային» բառը): Սևանը շատ ավելի հանրահայտ է որպես Գեղամա լճի կղզու և նրա վրա գտնվող ամրոցի անվանում, որը հետագայում անցել է լճին: Սևանա լիճը գտնվում էր Սյունիք, հնում՝ Սիւնիք/Սեւնիք նա-

2 Տե՛ս **Иванов В. В.**, Анатолийские языки, էջ 136: **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, Мецниереба, 1984, էջ 896:

3 Տե՛ս **Zimansky P. E.**, Archaeological Inquiries Into Ethno-Linguistic Diversity in Urartu, Greater Anatolia and the Indo-Hittite Language Family, Washington D. C., 2001, էջ 18: **Բորիսյան Ա.**, Վասպուրականը Հայկական Լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան մշակութային զարգացումների համակարգում, «Հայաստանի մայրաքաղաքները», N I, «Վան», Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2013, էջ 34-35:

4 Տե՛ս **Пиотровский, Б. Б.** Искусство Урарту, Ленинград, Издательство Государственного Эрмитажа, 1962, էջ 29:

5 Այս մշակույթների էական տարբերության վերաբերյալ տե՛ս **Տիրացյան Գ., Արեշյան Գ.**, Հնագիտությունը և Ուրարտու-Հայաստան պրոբլեմը, «Պատմաբանասիրական հանդես», 1990, N 3, էջ 70-75: **Zimansky P. E.**, Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire, Bulletin of American School of Research, 1995, 299-300, էջ 103-115:

6 Տե՛ս **Արվանդյան Գ.**, Երկեր, հատ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 76-77: **Հարությունյան Ա.**, Հայ առասպելաբանություն, Պէկրուք, «Վահե Սեթեան», 2000, էջ 44-45:

հանգում, որի անունը միանգամայն համադրելի է **Siwini** դիցանվան հետ և անբաժանելի է Սևանից⁷ (Մինիք ու Սեւան անվանումների հետ հմնտ. խեթ. **šiuini**, **šiuanni** ձևերը): Սյունիքի արևելյան հարևան Արցախ նահանգը կոչվել է նաև **Փոքր Մինիք**, իսկ տարածական նեղ ընդգրկմամբ՝ Սյունիքը ծղուկն էր, ներկայիս Միսիանի շրջանը⁸:

Սյունիքը **արև/արեգ** արմատով անվանումների առավել խիտ կենտրոնացման մի շրջան է⁹ (հմնտ., օրինակ, *Արեւիք*, *Արեւեաց քուն*, *Արեւիս*, *որը* (*Արեւիքի* հայցական հոլովածն է), *Արեւիկ*, *Արեւիսարակ*, *Արեւարուլ* տեղանունները, որոնցից առաջին երեքը ցեղանվան նման են՝ «արևյաններ»), իսկ Սևանի հյուսիսարևելյան լեռնաշղթայի Արեգունի անվանումը կարող է արևի՝ Վանի արևելյան լեռներից ծագելու լեգենդի նման մի պատկերացման արտացոլումը լինել: Արևիս գյուղը գտնվում է Սյունիքի ծղուկ գավառում, որ այլ կերպ կոչվել է ամբողջ Սյունիք նահանգի անունով, այսինքն՝ ընկալվել է որպես բուն Սյունիք: Սյունյաց իշխանական տոհմում *Արեւ* անձնանունը հայտնի է հինգերորդ դարից. նույնարմատ անձնանունների մեծ մասը (*Արեւիկ*, *Արեւիսար* են) ևս Սյունյաց տարածաշրջանին է հատուկ¹⁰: Ըստ այդմ կարելի է կարծել, որ *Մինիք* տեղանունը, իրոք, կապված է «արև, արևի աստված» նշանակության հետ (այն կարող էր ծագել *siwini- կամ *siwini- հիմքերի հնդեվրոպական *-iyā ածանցով կազմված ձևերից, հմնտ. սեռ. **Մինեաց**): Ի միջի այլոց, հնարավոր է, որ նույն **սիւ-/սեւ-** արմատի հետ են կապված Գարդանան-Շակաշենի հայերի ազգագրական մի խմբի միջնադարյան **սեւորդիք** և նրանց տոհմի հիմնադիր Սեւ կամ Սեւուկ նահապետի անունները¹¹, որոնք կարող էին ծագել արևի աստծու՝ ցեղի անվանադիր նահապետի անունից:

Սևանա լճի արևելյան ափի, այսինքն՝ հավանաբար հետագա հայկական Արցախ նահանգի տարածքում գտնվող երկրներից **Piruaiini**-ի¹² արմատը նույնական է խեթալուվիական «ձիավոր աստծու»՝ Pirua-ին¹³ (-ini-ն այդ շրջանի տեղանվանական ածանց է): Եթե տեղանվան այս ընթերցումը

7 Տե՛ս **Ալիշան Ղ.**, 1893, Սիսական, Վենետիկ, Մխիթարյանների տպարան, 1893, էջ 6: **Երեմյան Ս. Տ.**, Ս. Մառը և VII դարի Հայոց «Աշխարհացոյց»ը, «Մառը և հայագիտության հարցերը», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 81: **Պետրոսյան Ս.**, Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհում, «Պատմաբանասիրական հանդես», 1976, N 1, էջ 191-192: Հմնտ. **Адонц Н. Г.**, Армения в эпоху Юстиниана, СПб., типография Академии наук, 1908, էջ 421-423 ծանոթ. 4:

8 Տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., ԵՊՀ հրատ., 1968, էջ 205-206:

9 Տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քախչյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Եր., ԵՊՀ հրատ., 1986, էջ 423-431:

10 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1942, էջ 272-273:

11 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 6: **Պետրոսյան Ս.**, նշվ. աշխ., էջ 191-192: **Петросян А. Е.**, Отражение индоевропейского корня *uel- в армянской мифологии, «Արաբեր» հաա. գիտ., 1987, N 1, էջ 68 (նշենք, որ սևորդիների ծագման մասին կան այլ վարկածներ ևս):

12 Տե՛ս **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ер., «Гитутюн», 2001 (այսուհետև՝ **ԿՄԿ**), էջ 517: Այս տեղանունը կարդացվում է նաև **Turuani**: Տե՛ս **Salvini M.**, The Historical Geography of the Sevan Region in the Urartian Period, The North Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, Roma, CNR, 2002, էջ 56, ծանոթ. 3:

13 Այս աստծու վերաբերյալ տե՛ս, օրինակ, **Haas V.**, Geschichte der hettitischen Religion, Leiden, New York, Köln, Brill, 1994, էջ 412 ff.

ձիշտ է, ապա պետք է կարծել, որ Արցախի նախատարտական դարաշրջանի բնակչության մեջ ևս եղել է անատոլիական տարրը: Ձին բազում երկրներում, հավանաբար նաև Ուրարտում, արևի սիմվոլն էր¹⁴: Հիշենք, որ Արցախ/Փոքր Սյունիքը հայտնի էր իր ձիերով, իսկ Սյունիքը՝ Մեծ Հայքի մյուս նահանգների համեմատ՝ չափազանց մեծաքանակ այրուձիով:

Վանա և Սևանա լճերի շրջանների հին բնակչության էթնիկ պատկանելության մի կարևոր ցուցիչ կարող են լինել տեղի էնդեմիկ (միայն այդ լճերին բնորոշ) ձկների՝ Վանա **տառեխի** և Սևանա **իշխանի** անվանումները, որոնք կարող են խեթական ծագում ունենալ¹⁵:

1. Բիաինիլի, Ուրարտու և Սյունիք

Ուրարտու տեղանվան նախնական ձևերն են համարվում մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջերից հիշվող **Uruaṣri/u-ն** և **Uraṣri-ն**, որ գտնվել է Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Կորդվաց Արարատ լեռան (ներկայիս՝ Ջուղիդաղ, Թուրքիայի և Իրաքի սահմանին) շրջանում և հարակից տարածքներում¹⁶: Ուրարտուի երկու առավել սրբազան կենտրոնները ևս գտնվում էին Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Ուրմիա լճից հարավ-արևմուտք և Վանա լճից հարավ: Առաջինը Արդինի քաղաքն էր, որն ասորեստանյան արձանագրություններում կոչվում է այլ անունով՝ **Muṣaṣir/Muzaṣir** (Մուծածիր կամ Մուզածիր), որը գերագույն աստված Խալդիի պաշտամունքի կենտրոնն էր ներկայիս Ռովանդուզի շրջանում: Սյուսը Կումենուն էր, խուռիական անունով՝ Կումենն, տերության երկրորդ գլխավոր աստծու՝ փոթորկի ու ամպրոպի աստված Թեյշեբայի կենտրոնը Կորդվաց Արարատի շրջանում¹⁷: Այստեղ՝ լեռնաշխարհի ծայր հարավում են գտնվել նաև երկրի մյուս մեծ աստվածների պաշտամունքի հիմնական կենտրոնները¹⁸:

14 Ս. Տեյս **Հնայական Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., Հայաստանի ԳԱ հրատ., 1990, էջ 45:

15 Տառեխը նույնական է հուն. τάρχιος-ին («աղած, չորացրած կամ ծխահարված ձուկ»): Վերջինս կարող է առնչվել թաղման մի տերմինին՝ **ταρχύω**-ին, որը կարող է առաջացած լինել խեթավուլիական ամպրոպի աստծու Tarḫu- անունից (ենթադրվում է կապ թաղման ծեսի հետ): Այս բառերի վերաբերյալ տես **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հատ. 4, Եր., ԵՊՀ հրատ., 1979, էջ 377: **Цымбурский В. Л.**, Греческий глагол тарχύω ‘погребаю’ и малоазийский миф о поражении бога-победителя, “Вестник древней истории”, 2007, N 1, էջ 152-159: Տառեխ բառն ունի բարբառային տարրերակներ և նրա հունարենից նոր փոխառություն լինելը կարող է վիճարկվել: Իսկ **իշխել** և **իշխան** բառերի համար հմմտ. խեթ. išḫa-, ešḫa- «տեր, իշխան»: Տեյս **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., ԳԱ հրատ., 1990, էջ 224-225: Այստեղ հիմնավորվում է բառի անատոլիական և մերձվում առավել ընդունված իրանական ստուգաբանությունը:

16 Տեյս **Плотровский Б. Б.**, Ванское царство, էջ 43-46: **Арутюнян Н. В.**, Биайнили (Урарту), էջ 17:

17 Տեյս **Меликишвили Г. А.**, Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья, Тбилиси, հրատ., 1954, էջ 165-168: Մուծածիր և Կումենու երկրների մասին տես **Radner K.**, Between a Rock and a Hard Place: Musasir, Kumme, Ukku and Subria – the Buffer States Between Assyria and Urartu, Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14, October 2007, Louvain, 2012, էջ 243-264:

18 Տեյս **Grekyan Y. H.**, The Will of Menua and the Gods of Urartu, Aramazd, “Armenian Journal of Near Eastern Studies”, 2006, N 1, էջ 150-195:

Արդինի/Մուծածիրը, ամենայն հավանականությամբ, նաև Ուրարտուի արքայատոհմի օրրանն էր¹⁹: Ուրարտական արքաները այնտեղ էին թագադրվում, կամ գոնե նրանց կոչումները այնտեղ էին հաստատվում²⁰: Նրանք և նրանց բարձր աստիճանավորները պարբերաբար այցելում էին այդ քաղաք և այնտեղի տաճար՝ ակնհայտորեն հետևելով ծիսական ավանդությանը: Դա հայտնի էր նաև ասորեստանցիներին, որոնք քաղաքի գրավումը մ. թ. ա. 714 թ. ներկայացնում են որպես կորստաբեր հարված Ուրարտուի արքայի և թագավորության համար: Իրենց բուն տարածքներից հեռանալուց և նոր կայսրություն ստեղծելուց հետո էլ Ուրարտուի իշխող վերնախավն այդկերպ էր պահպանում իր հին հայրենիքի հիշողությունը:

Ըստ այդմ՝ այդ շրջանն է եղել ուրարտախոս էթնիկ հանրությանի հին հայրենիքը: Ուրարտական տերության գոյության մեծ ժամանակահատված Արդինին և Կուսենուն գտնվում էին երկրի սահմաններից դուրս²¹: Կարելի է ենթադրել, որ Շիվինին մեծ աստվածն էր Վան-Տուշպայի շրջանի հին բնիկների, որոնց տիրել էին լեռնաշխարհի ծայրհարավային շրջաններից եկած նվաճողները²²: Այդ նվաճումը պետք է տեղի ունեցած լիներ Ուրարտուի ձևավորումից ոչ շատ առաջ, քանի որ նրանք հստակորեն պահպանել էին իրենց հին հայրենիքի հիշողությունը:

Ուրարտական տեքստերում իրենց երկիրը կոչվում է **Bia(i)nili**, որը հակադրվում է թշնամական երկրներին²³: Ընդունված է կարծել, որ **Bia(i)nili**-ի **Bia(i)na** հոլովածնից է ծագում Տուշպայի հետագա՝ Վան անվանումը: Ըստ այդմ՝ Բիահինիլին պիտի ներկայացնեն պետության կենտրոնական՝ Վան-Տուշպայի շրջանը: Սեպագիր **Biaina**-ն հավանաբար հնչել է **V^hānalyamVāna**, որը հայերենում դարձել է Վան, սեռ. հոլով.՝ Վանայ²⁴: Այս անվանումներում **-ni**-ն ուրարտական ածանց է, **-li**-ն՝ հոգնակերտ, իսկ **-na**-ն հոլովական վերջավորություն: Երկրանվան արմատը կարող է վերականգնվել այսպես՝ **Vā/Væy**, որը հայերենով արտացոլվել է որպես **վա/վայ**: Ըստ այդմ՝ **Biainili**-ն թարգմանվում է՝ «Վայ-ական-ք», որտեղ սեպագիր **Bia(i)**-ն՝ հայերեն **վայ**-ը ցեղանուն է:

19 Տե՛ս, օրինակ, **Меликишвили Г. А.**, Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, «Вестник древней истории», 1948, N 2, էջ 41-48: **Дьяконов И. М.**, Предыстория армянского народа, Ер., Изд. АН Арм. ССР, 1968, էջ 140, ծանոթ.154: **Zimansky P. E.**, Archaeological Inquiries Into Ethno-Linguistic Diversity in Urartu, էջ 24: **Պետրոսյան Ա.**, Հայոց ազգածագման հարցեր, Եր., «Անտարես», 2006, էջ 48-50:

20 Տե՛ս Ասиро-вавилонские источники по истории Урарту (пер., ред. **Дьяконова И. М.**), «Вестник древней истории», 1951, 2, N 49 (309), էջ 330-331: **Հմայակյան Ա.**, նշվ. աշխ., էջ 75-76:

21 Տե՛ս, օրինակ, **Salvini M.**, La formation de l'état urartéen, Hethitica 8, 1987, էջ 403-404:

22 Տե՛ս **Меликишвили Г. А.**, К вопросу о древнейшем очаге урартских племен, «Вестник древней истории», 1947, N 4, էջ 21-29: **Пiotровский Б. Б.**, Ванское царство, М., изд-во восточной литературы, 1959, էջ 43: **Арутюнян Н. В.**, Биайнили (Урарту), Ер., АН Арм. ССР, 1970, էջ 17: **Պետրոսյան Ա.**, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, «Պատմաբանասիրական հանդես», 2002, N 2, էջ 243-270: Սոյնի խեթերենի հետքեր Հայկական լեռնաշխարհի արևելքում և հարավ-արևելքում, խալդյան գործությամբ... Հողվածների ժողովածու՝ նվիրված Բորիս Պիոտրովսկու ծննդյան 100-ամյակին, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 65-77:

23 Տե՛ս, օրինակ, **Пiotровский Б. Б.** Ванское царство, էջ 32: **КУКН**, էջ 501:

24 Հմտ. **Diakonoff I. M.**, Hurrisch und urartäisch, էջ 15-16, Anm. 14: **Diakonoff I. M., Kashkai S. M.**, Geographical Names According to Urartian Texts. Weisbaden, Reichert, 1981, էջ 21: **Хачикян М. Л.**, Хурритский и урартский языки, Ер., АН Арм. ССР, 1985, էջ 38, 134:

Ուրարտագիտության մեջ բավական ընդունված է կարծել, որ Հայկական լեռնաշխարհը հնուց ի վեր բնակեցված է եղել խուռուրարտական ցեղերով, այսինքն՝ ուրարտերեն խոսող հանրույթը Ուրարտուի և Հայկական լեռնաշխարհի բնիկներն են, և սեպագիր **Bia(i)nili**-ն էլ ուրարտացիների տեղական անվանումն է²⁵: Եվ եթե լեռնաշխարհի բնիկներն իրենց երկիրն անվանել են **Bia(i)nili**, ուրեմն **Bia(i)**-ն էլ իրենց ցեղանունը պիտի լիներ: Բայց, դա, այսպես ասած, միայն առաջին մոտեցման տրամաբանությամբ: Այստեղ մի քանի ապրիորի ընդունված կետեր կան, որոնք չեն հաստատվում: Նախ՝ Ուրարտուն երկրի ասորեստանյան անվանումն է, երկիրն էլ, ինչպես կարծում են ժամանակակից գիտնականները, բազմացել կայսրություն էր²⁶: Լեռնաշխարհում մ. թ. ա. II-I հազարամյակներում բացահայտվում են խաթերենի, անատոլիական, սեմական, հնդարիական, բալկանյան լեզուների, հայերենի և որոշ չնույնացվող լեզուների հետքեր²⁷: **Ըստ այդմ՝ ուրարտացի տերմինի միանշանակ իմաստավորումը միանգամայն անընդունելի է, քանի որ երկրի բնակչությունը բազկացած էր բազում էթնիկ խմբերից, իսկ տեղի առաջատար ազգը կարող էր կոչվել օտարալեզու երկրանունից տարբեր ցեղանունով**: Իրականում մենք չգիտենք՝ ինչ է եղել ուրարտացիների ինքնանվանումը²⁸:

Ընդհանրապես օտարալեզու երկրանունների հիման վրա արված այդօրինակ մեկնաբանությունները միշտ սխալ հետևությունների կարող են հանգեցնել: Այսպես՝ հայերը վրացիներին կոչել են վիրք, երկիրը՝ Վիրք/Վրաստան, իսկ վրացիներն իրենք իրենց՝ քարթվելի, երկիրը՝ Քարթլի/Սաքարթվելո, ֆրանսիացիները գերմանացիներին կոչում են գերմանական մի ցեղի՝ ալեմանների անունով, երկիրն էլ՝ Ալմանյը, մինչդեռ գերմանացիներն իրենց կոչում են դոյչ, իսկ իրենց երկիրը՝ Դոյչլանդ:

Սա՝ օտարալեզու անվանումների դեպքում: Իսկ երկրների՝ սեփական լեզվով անվանումները, ինչպիսին Բիաինիլին է, միշտ են կապված ժողովրդի սեփական ցեղանվան հետ: Ահա մի օրինակ մեր տարածաշրջանի հնագույն պատմությունից: Խեթերը, գրավելով կենտրոնական Փոքր Ասիան և իրենց կայսրությունը ստեղծելով այստեղ, չփոխեցին երկրի հին անվա-

25 Տե՛ս **Меликишвили Г. А.**, Урартские клинообразные надписи, М., изд-во АН СССР, 1960, էջ 423: Հմմտ. **Питровский Б. Б.**, Ванское царство, էջ 32:

26 Տե՛ս, օրինակ, **Zimansky, P.**, Urartu as Empire: Cultural Integration in the Kingdom of Van, Biainili-Urartu: The Proceedings of the Symposium Held in Munich 12–14 October 2007, Leuven, Peeters., 2012, էջ 101–110.

27 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Եր., «Անտարես», 2017, էջ 99-132:

28 Այսպես՝ Ուրարտուի ականավոր հետազոտող Ի. Ղյակնովը կարծում էր, որ նրանց ինքնանվանումը եղել է **Տուր**, որի հիմք է ծառայել ուրարտական արքաների կոչումներից մեկը՝ «Տուրի-ի արքա»: Տե՛ս **Дьяконов И. М.**, О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах, էջ 59-60: **Petrosyan A. Y.**, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington D. C., Institute for the Study of Man, 2002, էջ 180: Բայց դա ևս ընդամենը կարծիք է, վարկած, որը լայնորեն չի ընդունվել: Ներկայումս **Տուրի**-ի հավանական թարգմանությունը համարվում է «տերություն» բառը: Տե՛ս **Գրեկյան Ե.**, Բիաինիլի-Ուրարտու. պետություն և հասարակություն (պատմահնագիտական ուսումնասիրություն), դոկտորական ատենախոսություն, Եր., ձեռագիր, 2016, էջ 431՝ նշված զրականությամբ:

նունը: Նրանք այդ երկիրը, ապա և հենց իրենց շարունակեցին կոչել **gatti**՝ տեղի հին բնակիչների՝ խաթերի անունով: Այսպիսով՝ երկրանունը միշտ չէ, որ համընկնում է երկրին տիրող էթնիկ հանրության ցեղանվանը: Համաշխարհային պատմության մեջ նման օրինակները բազմաթիվ են նաև հետագա դարաշրջաններում²⁹:

Ինչպես տեսանք, ուրարտացիները եկել են Հայկական լեռնաշխարհի ծայր հարավից: Նրանց պետության վերաբերյալ ասորեստանյան աղբյուրների առաջին տվյալներն ի հայտ են գալիս մ. թ. ա. IX դարից, իսկ միասնական հզոր պետության ձևավորումը սկսվել է նույն դարի վերջին տասնամյակներին՝ Իշպուխի արքայի կառավարման շրջանում: Հաշվի առնելով, որ ուրարտական պետության ձևավորումը տեղի է ունեցել ուրարտացիների կողմից երկրամասի նվաճումից ոչ շատ առաջ, պետք է կարծել, որ այդ ընթացքում նոր նվաճողները հասցրած չէին լինի փոխել իրենց երկրի անվանումը: Ուստի, խեթերի երկրի օրինակով, առավել հավանական է թվում, որ սեպագիր Բիախնիլի երկրանունը առաջացել է Վանա լճի արևելքի խեթալեզու հին բնակիչների ցեղանունից:

Ըստ Գրիգոր Ղափանցյանի՝ Բիախնիլիի հետ է կապված Սյունիքի Վայոց ձոր տեղանունը³⁰: Ինչպես ասվեց, Սյունիքը նեղ իմաստով նշանակում էր Սիսիանի շրջանը՝ Ծղուկը՝ Վայոց ձորի հարավային հարևան գավառը: Վայոց ձորի արևելքում էր գտնվում Արցախի Վայկունիք գավառը, որը նույնպես կարող է կապվել վայ ցեղանվան հետ (ինչը համահունչ է Սյունիքի և Արցախի հին բնակիչների ազգակցության վերաբերյալ ասվածին): Այսպիսով՝ այստեղ, ինչպես և Վանա լճի արևելքում, *սի(ի)նի-* և *վա(յ)-* արմատներով տեղանունները հանդիպում են կողք կողքի:

Վանա լճի արևելյան Հայոց ձոր տեղանվան համաբանությամբ պետք է կարծել, որ *վայոց*-ը ներկայացնում է *վայ* ցեղանվան հոգնակի սեռական ձևը: Ըստ այդմ՝ այս ցեղանունը, Հայկական լեռնաշխարհի մյուս երկու համահունչ՝ *հայ* և *յայ* ցեղանունների համաբանությամբ հնդեվրոպական **-i(y)o-*վերջածանցով հայերենում դարձել է **վայո*, որը մ. թ. ա. առաջին դարերի ընթացքում տեղի ունեցած վերջին ձայնավորի կանոնավոր անկումից հետո դարձել է *վայ*, իսկ վերջին *-ն*-ն պահպանվել է հոգնակի սեռականում (հմնտ. *Հայք* – *Հայոց* և *Տայք*–*Տայոց* գուգահեռ ձևերը): Հայերենին բնորոշ է որոշ ցեղանուններիին *-իկ* ածանցի հավելումը. հմնտ., օրինակ, *հնդիկ*, *պարսիկ*, *խուժիկ* «խուժիստանցի» ևն (կա նույնիսկ միջնադարյան բարբառային *խայիկ* < *հայիկ*

29 Ընդհանրապես, երկրի բնակչության էթնիկ կազմը փոխվելիս շատ հին ցեղատեղանուններ պահպանվում են: Այսպես գերմանացիները, գրավելով իրենցից արևելք ընկած շրջանների հողերը, երկիրը շարունակեցին կոչել հին անունով՝ Պրուսիա (լատ. *Borussia*՝ տեղական բալթիական ցեղերին տրվող պրուս անվանումից), իսկ տեղում ստեղծված գերմանական պետությունը և նրա գերմանացի բնակիչներին պրուսներ (գերմ. *Preußen*): ԱՄՆ մի շարք նահանգներ կոչվում են տեղական հնդկացիների հին ցեղանուններով (օրինակ՝ Կանզաս, Ղակրտա, Տեխաս, Յուտա), որոնք ներկայումս որոշ չափով ամերիկացիների ենթաէթնիկ ցեղանունների նշանակություն են ձեռք բերել: 30 Տե՛ս Կ. Капаниця Г. А., Историко-лингвистические работы, т. 2, Ер., изд-во АН Арм ССР, 1975, էջ 129-130:

«հայ» ձևը): Ավելին, պարսիկների ցեղանունը հանդես է գալիս երկու՝ *-իկ*-ով ածանցյալ և առանց դրա ձևերով՝. հմնտ. *պարսիկ* և *Պարսք*: Վայկունիք և Վայոց ձոր տեղանուններում հանդիպում են ցեղանվան նույնատիպ զուգահեռ ձևեր՝ *վայիկ* և *վայ*, որոնցից առաջինը՝ *-ունի* ածանցով և *-ք* հոգնակերտով, դարձել է Վայկունիք (< *Վայիկ-ունի-ք*): Ի միջի այլոց, ուրարտական արձանագրություններում հիշվում է նաև *Biani* երկիրը (Արաքսի վերին հոսանքներում)³¹, որը ևս կարող էր լինել նույն *bia(i)/վայ* ցեղի գաղթականություն:

2. Լեզվաբանական քննարկում

1. Վերը ասվածը հաստատում է Վան քաղաքանվան ծագումը *Bia(i)nili*-ի *Bia(i)na* հոլովածնից: Բանն այն է, որ չնայած այս վարկածը բավականին ընդունված է, սակայն ամբողջությամբ խնդրի էությունը չի սպառում: Նախ՝ Վան ձևը նույնական է հայերեն **վան** «բնակություն, բնակավայր, իջևան» բառին, որից մի շարք տեղանուններ կան Հայկական լեռնաշխարհում³²: Ապա՝ կա նաև տեսակետ, որ Բիա(ի)նիլին ցեղանուն է, այլ տեղանուն՝ ընկած Վանի մերձակա Գնունիք գավառանվան հիմքում³³: Այս երկու ստուգաբանություններում էլ *-ն*-ն հանդես է գալիս որպես արմատի մաս: Սակայն վերոշարադրյալը ցույց է տալիս, որ Բիա(ի)նիլի արմատը **bia(i)** ցեղանունն է, և *-ն*-ն (ինչպես և Վան քաղաքի անվան մեջ) ուրարտական վերջավորություն է և ոչ արմատի մաս, հակառակ դեպքում այն հայերենում չէր կարող դառնալ վայ/վայիկ:

2. Սևանա լճի արևմտյան Գեղաքունի (հետագայում՝ Գեղարքունիք) գավառը ուրարտական աղբյուրներում կոչվել է *Uelikuni* կամ *Uelikuhi*: Ըստ այդմ՝ շատ ընդունված է կարծել, որ հնագույն հայերենի *w > *gw > g անցումը տեղի է ունեցել *Uelikuni* տեղանվան առաջին արձանագրումից, այսինքն՝ մ. թ. ա. VIII դարից հետո: Ուրարտական սեպագիր **b**-ն հայկական անվանաբանական համապատասխանություններում երբեմն համապատասխանում է **վ**-ին և **ւ**-ին (*Biaina* – Վան, *abili* – աւել, յավելույ)³⁴, բայց անհասկանալի է մնում երկու հարց. 1. ինչո՞ւ է **Bia(i)nili**-ն, ի տարբերություն **Uelikuni**-ի, գրվում **bi**-ով. 2. ինչո՞ւ **Uelikuni**-ից ավելի վաղ ավանդված **Bia(i)na**-ի **b**-ն, որը **վ** կամ **ւ** պիտի

31 Տե՛ս KYKH, էջ 501:

32 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Սելիք-Քախչան Ս. Ս., Քարտեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 4, Եր., ԵՊՀ հրատ., 1986, էջ 747-751:

33 Գնունիք գավառը վաղ միջնադարում եղել է արքայական մատուցակների Գնունի իշխանական տոհմի տիրույթը (շրջանը հայտնի է եղել որպես գինեգործության կարևոր կենտրոն): Այս տոհմանուն-տեղանունը ծագում է հայ. *գինի* բառից՝ *-ունի* ածանցով՝ *Գինի-ունի* > *Գնունի*: *Bia(i)nili* տեղանվան հիմքը *Bia(i)ni*-ն (կարդալ /Viānə-/ կարելի է ընկալել որպես հայ. *գինի* բառի խեթական ստուգաբանական զուգորդի՝ *wiyana*-ի ուրարտական հաղորդումը *-li* հոգնակերտով՝ որպես «խաղողի/գինու երկիր»: Ըստ այդմ՝ Գնունիքը կարող էր ուղղակի թարգմանությունը լինել հին Բիահնիլիի: Հմնտ. Պետրոսյան Ս., Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 1999, N 2-3, էջ 188: Պետրոսյան Ա., Հայ ժողովրդի ծագման խնդիրը, էջ 108:

34 Տե՛ս Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 430:

լիներ, չի դարձել **q**: Առաջին հարցի առնչությամբ թվում է, որ **Biainili**-ի արմատը, **uiai** գրվելով, ձայնավորների կուտակմամբ անորոշություն կարող էր առաջացնել (օրինակ՝ կարող էր ընկալվել որպես **ույայ**), այդ պատճառով նախընտրել են **biai**- գրությունը: Իսկ երկրորդի իրական պատասխանը պիտի լինի այն, որ հայերենի *w > *gw > g անցումը տեղի է ունեցել նախաուրարտական դարաշրջանում և մ. թ. ա. VIII դարում արդեն չի գործել³⁵: Ըստ այդմ՝ պետք է կարծել, որ **Uelikuni**-ն, որպես վիշապ քարակրթողների հանրահայտ երկրի անվանում, վաղուց է մտել ուրարտերեն և պահպանվել հին անվանաձևով՝ Uelikuni, իսկ հայերենում մ. թ. ա. VIII դարում արդեն փոխված է եղել Գելաքունիի կամ Գվելաքունիի³⁶:

3. Ուրարտական արձանագրություններում բուն Սյունիքի (Սիսիանի շրջանի) հին՝ Ծղուկ անվանումը ավանդված է **Տսուզս** և **Տիսուզս** ձևերով³⁷: Այս տեղանունն ակնհայտորեն նույնական է հայերեն **ծղուկ** (ունի **ծղի**, **ծղիկ** տարբերակները) բառին, որը նշանակում է «ամբողջ դաստակը, ձեռքը և մատները միասին» և ունի հավանական հայկական ստուգաբանություն³⁸: Ընդհանրապես, մարմնամասեր նշանակող բառերը հաճախ են տեղանուններ դարձել (հմմտ. օրինակ, հայկական Դաստակ, Ձեռք, Բազուկ և Մատունք տեղանունները)³⁹: Կարծիք կա, որ Ծղուկի՝ նահանգի անունով Սյունիք և Սիսական կոչվելը պայմանավորված է Սյունյաց իշխանների ուստանի այստեղ գտնվելով⁴⁰: Բայց հավանական է, որ հենց Ծղուկն է եղել Վանից գաղթած Շիվինի/Սիլինի աստծուն պաշտող «խեթախոս վանեցիների» կենտրոնը իրենց նոր հայրենիք Սյունիքում: Հատկանշական է, որ Սիսիանից ոչ հեռու Արևիս՝ Արևյանների գյուղի մերձակայքում գտնված մ. թ. ա. VII-VI դդ. ուրարտական արձանագրության մեջ հիշատակվում է արևի աստվածը (գաղափարագիր **ՍՄՄ**, որն ուրարտերեն կարդացվում է **Տիսին**)⁴¹:

3. Պատմական քննարկում

35 Հայերենում *w > g զարգացման վաղ ժամանակագրության և *Bia(i)na* > Վան ու Uelikuni > Գեղաքունի անցումների մասին տես **Diakonoff I. M.**, Hurro-Urartian Borrowings in Old Armenian, “Journal of the American Oriental Society”, 1985, N 105/4, էջ 601: **Աղաբեկյան Մ.**, Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ, «Պատմաբանասիրական հանդես», 2013, N 1, էջ 172-173: **Պետրոսյան Ա.**, Հին հնդեվրոպական օժ-վիշապ հայկական ավանդույթում և վիշապ քարակրթողները. Վիշապը հեթանոսի և իրականության սահմանին, Եր., ՀԱԻ հրատ., 2019, էջ 151:

36 Բազմաթիվ են օրինակները, երբ որևէ լեզվի տեղանունները տվյալ լեզվի զարգացման ընթացքում փոխվում են, բայց հարևան լեզուներում պահպանվում են հին ձևով: Օրինակ գերմ., անգլ.: Փարիս, ֆրանս.: Պառի, գերմ., անգլ., ֆրանս.: Պրագ, չեխ. Պրահա, ռուս. Վեյմար, գերմ. Վայմար: Այս տարբերությունները բացատրվում են այն բանով, որ Փարիզը հնում կոչվել է Պարիս, Պրահան՝ Պրագա, Վայմարը՝ Վեյմար, և հարևան լեզուներում, որոնցում տեղի չեն ունեցել այդ փոփոխությունները, պահպանվել են հնից փոխառված անվանաձևերը: Տես **Պետրոսյան Ա.**, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, էջ 182-183, ծանոթ. 433:

37 KYKH, էջ 522: **Salvini M.**, Corpus dei testi urartei, vol. V 5, Paris, De Boccard, 2018, էջ 436:

38 Տես **Տահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ», 2010, էջ 365: **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Ագեղեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Սբ Ղազար, 1836, էջ 1041: **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Եր., 1973, էջ 463:

39 Տես **Դիլբարյան Ն.**, Մարմնամասեր նշանակող բառերից առաջացած տեղանունները Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, N 2, էջ 167:

40 Տես **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 205:

41 Տես KYKH, էջ 324-326.

Ժամանակակից պատկերացումների շրջանակում տեսականորեն հնարավոր է սեպագիր **Bia(i)**, հայերեն՝ *վայ/վայիկ* ցեղի՝ լեռնաշխարհի տվյալ երկու շրջաններում տարածման մի քանի հնարավորություն. 1. այն բնակվել է երկու երկրամասերում էլ՝ նախաուրարտական ժամանակներից (ընդ որում, կարող էր սկզբնապես հաստատված լինել այդ շրջաններից մեկում, հետո անցած լիներ մյուսը), 2. նրանք հյուսիս են մղվել Վանա շրջանից հարավային նվաճողների՝ ուրարտացիների կողմից կայսրության ստեղծման կամ նախորդ դարաշրջանում (մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին) կամ 3. Ուրարտուի անկումից հետո՝ Վանի շրջանի նոր տերերի՝ հայերի կողմից: Հնարավոր է նաև, որ Վանի շրջանի հին բնիկների ցեղանունը, որը հայոց մեջ դարձել է *վայ/վայիկ*, անկախ իր ծագումից, անցած լիներ ուրարտացիներին (հմմտ. խեթերի կողմից իրենց հայրենիքի հին բնիկների՝ խաթերի ցեղանվան յուրացումը), և Վայոց ձորն ու Վայկունիքը կարող էին այդպես կոչվել Ուրարտուի ստեղծումից հետո արդեն այդ ցեղանունը յուրացրած ուրարտացիների անունով:

Սյունիքի վերաբերյալ մ. թ. ա. առաջին հազարամյակի գրավոր աղբյուրների՝ ուրարտական սեպագիր արձանագրությունների տեղեկությունները չափազանց սուղ են, մինչդեռ այս դատողությունները ստուգելու և ճշգրտելու համար կարևոր կարող էին լինել հնագիտության տվյալները: Սակայն, ինչպես ասվել է, նախաուրարտական դարաշրջանում գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհի տարածքները, այդ թվում և՛ Վանն ու Սյունիքը, հնագիտորեն շատ չեն զանազանվում իրարից: Այսպես՝ Ուրարտական տերության գոյության դարաշրջանում Սյունիքում ուրարտական ազդեցությունը թույլ է եղել, և թեև կան Վանի արքաների կառուցած փոքրաթիվ ամրոցներ, բայց դրանք ապացույց չեն Վանի շրջանից բնակչության այնպիսի տեղաշարժի, որը փոխեր երկրամասի էթնիկ պատկերը և նույնիսկ անվանումը⁴²:

Այսպիսով՝ միայն անվանաբանական տվյալների հիման վրա կարող ենք փորձել ուրվագծել առավել հավանական պատկեր: Անվանաբանությունից հայտնի է, որ ցեղանունից ածանցված տեղանունները ցույց են տալիս տվյալ ցեղի՝ որևէ երկրամասում փոքրամասնություն և ուշ ներգաղթողներ լինելը (այսպես՝ «Ռուսական» անունով գյուղ կարող է լինել ինչ-որ տեղ Ղազախստանում և ոչ բուն Ռուսաստանում, ուր բոլոր գյուղերը ռուսական են)⁴³: Այսպես, Ուրարտական տերության ստեղծումից հետո երկրի պետական կրոնը ձեռք էր բերել նոր, վերին աստիճանի առանձնա-

42 Այս հարցով խորհրդատվության համար են երախտապարտ եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն Արսեն Բորոխյանին:

43 Տե՛ս **Никонов Б. А.**, Введение в топонимику, М., Наука, 1965, էջ 40:

հատուկ բնութագրեր: Գերագույն աստված Խալդիի պաշտամունքը, որը Գ. Ղափանցյանը բնորոշում է որպես «խալդանություն»⁴⁴ դարձել էր այնքան ընդգրկուն, որ համեմատելի էր միաստվածության հետ⁴⁵: Ուրեմն, հավանական է, որ վայ ցեղը Սյունիքում և Արցախում հաստատված լինելուց հնագույն ժամանակներում, բայց և Ուրարտական տերության «խալդակենտրոն» կրոնի ձևավորումից առաջ, այսինքն՝ ուշ եկվոր լինելու տեղի բնակչության մեջ (նույնկերպ և Հայոց ձոր տեղանունը կարող է վկայել, որ հայերը Վանա լճի արևելքում ժամանակին փոքրամասնություն են կազմել): Եվ ակնհայտ է, որ Սյունիք անվանումը և արևի աստծու պաշտամունքի բազմաթիվ հետքերը ցույց են տալիս, որ այդ մարդիկ պետք է լինեին Վանի շրջանի արևապաշտ խեթախոս բնակիչները, որոնք այդտեղ էին անցել, հավանաբար, իրենց երկրի՝ ուրարտացիների կողմից նվաճվելուց հետո:

Սիսիանի շրջանի երկու՝ Ծղուկ և Սյունիք գուգահեռ անվանումները նույնպես որոշակի մեկնաբանությունների հնարավորություններ են տալիս: Համարվում է, որ ուրարտական դարաշրջանում Սյունիքը եղել է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային նշանակալի տարածքներ զբաղեցնող հզոր էթնոնի ցեղամիավորման կազմում⁴⁶: Ըստ մեր վարկածի՝ հենց էթնոնիս է եղել «նախնական Հայաստանը»՝ հայոց օրրանը Հայկական լեռնաշխարհում⁴⁷: Սակայն, ինչպես տեսնում ենք, հետագայում Սյունիքում նշանակալի դեր են սկսել կատարել Վանի շրջանից եկած գաղթականները, և երկրի բնակչությունը և ինքը երկիրը կոչվել է Սյունիք նրանց մեծ աստծու անունով (որպես «արևի աստծու ցեղ և երկիր»): Ապագա բուն Սյունիքը ուրարտական աղբյուրում հիշվում է Տսուգս/Տիսուգս, այսինքն՝ Ծղուկի նախնական ձևով, որը, ամենայն հավանականությամբ, հայկական ծագում ունի: Իսկ տեղի Արևիս գյուղի ուրարտական արձանագրության մեջ, ինչպես ասվեց, հիշատակվում է արևի աստվածն ուրարտական գաղափարագրով՝ **ՍՄՄ**: Ամենայն հավանականությամբ, այնտեղ արդեն հաստատվել էին Վանի արևապաշտ գաղթականներ, որոնք տեղում հիմնել էին իրենց աստծու պաշտամունքը:

Հավելենք՝ սակավ և կողմնակի տվյալների հիման վրա արված նման դատողությունները միշտ էլ խոցելի են: Մեզ առավել հավանական թվացող վերոշարադրյալ եզրակացությունը կարող է լրացվել և ճշգրտվել նոր փաստերի ի հայտ գալով:

44 Ղափանցյան Գ., Ուրարտոյի պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1940, էջ 114:

45 Տե՛ս Հմայակյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 34:

46 Տե՛ս Արտյոնյան Ն. Բ., Топонимика Урарту, Ер., АН Арм. ССР, 1985, էջ 263: КУКН, էջ 505:

47 Տե՛ս Պետրոսյան Ա., Հայ ժողովրդի ծագման խնդիրը, էջ 181-199 հարցի գրականությամբ:

Արմեն Ե. Պետրոսյան – հեղինակ է մեկուկես տասնյակ գրքերի և ավելի քան երեք հարյուր գիտական, գիտահանրամատչելի և այլ հրապարակումների՝ տպագրված տարբեր լեզուներով Հայաստանում, հետխորհրդային երկրներում, Եվրոպայում և Ամերիկայում: Ուսումնասիրության հիմնական ուղղություններն են՝ Հայաստանի նախապատմություն, հնագույն պատմություն և մշակույթ, Հայաստանի, Հին Արևելքի և Կովկասի հին կրոններ, առասպելներ և էպոսներ, համեմատական առասպելաբանություն, բանահյուսություն, լեզվաբանություն:

Էլ. փոստ- alpehist@gmail.com

Summary

ON THE ASSOCIATIONS OF ANCIENT INHABITANTS OF THE EASTERN COAST OF LAKE VAN AND SYUNIK

Armen E. Petrosyan
Doctor of Sciences in Philology

Key words – Biainili, Van, Urartu, Etiuni, Siwnik՝, Vayoc՝ jor, Vaykunik՝, Hittite language, Šiuini.

Šiuini – the name of the third great god of Urartu, should have been borrowed from a Hittite dialect, cf. Hitt. *šiu-* (*šiuini*, *šiuanni*, *šiuana-*) ‘god’, earlier: ‘sun god’, *šiuatt-* ‘daytime’ < **dyeu-*, from the Indo-European name of the god of daylight sky. The consideration of this theonym as the Urartian parallel of the Hurrian sun god Šimigi is linguistically impossible (I. M. Diakonoff, V. V. Ivanov). The capital of Urartu Tušpa was the worship center of this god. The Armenian name of this city, Van, is derived from the declension form Bia(i)na of cuneiform Biainili, the name of royal domain and central land of the kingdom, where *-ni* is an Urartian suffix and *-li* a plural formant). It may be thought that in earliest times this region was inhabited by a Hittite speaking people.

Šiuini (to read: *Siwini*) is comparable to the name of the Armenian province of Siwnik՝ (< *Siwini-yā*, with Arm. plural formant *k՝*), where the largest concentration of toponyms derived from Arm. *arew/areg* ‘sun’ and traces of ancient cult of the sun god have survived. The local districts *Vayoc՝ jor* and *Vaykunik՝* (*Vay-ik-uni-k՝*) are probably associated with the ethnonym of the ancient inhabitants of the East of the Lake Van, the Biai people (to read: *Vyāy/Vāy*, which in Armenian reflected as *Vay*). This people of the Van region probably moved to

Այժմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 2 (74), ամսաթիվ-հունիս, 2021

Siwnik' in the beginning of the first millennium BC, under pressure of the Urartians.

Резюме

О СВЯЗЯХ ДРЕВНИХ ЖИТЕЛЕЙ ВОСТОЧНОГО БЕРЕГА ОЗЕРА ВАН И СЮНИКА

Армен Е. Петросян
Доктор филологич. наук

Ключевые слова– Бианили, Ван, Урарту, Этиуни, Сюник, Вайоц дзор, Вайкуник, хеттский язык, Шивини.

Имя третьего великого бога Урарту Шивини должно было быть заимствовано из какого-то хеттского диалекта, ср. хетт. *šiu-* (*šiuṇi*, *šiuṇa-*) «бог», ранее: «бог солнца», *šiuatt-* «день» < **dyeu-*, от индоевропейского имени бога дневного неба. Рассмотрение этого теонима как урартского аналога хурритского бога солнца Шимиги лингвистически невозможно (И. М. Дьяконов, В. В. Иванов). Центром культа этого бога была столица Урарту Тушпа. Ее армянское название Ван происходит от склоненной формы *Via(i)na* клинописной *Viaṇili*, названия царского домена и центральной земли царства, где *-ni-* урартский суффикс, а *-li* - формант множественного числа. Можно думать, что в древние времена этот регион был населен хеттоязычным населением.

Šiuini (читать: *Siwini*) сопоставимо с названием армянской провинции *Siwnik'* (< *Siwini-yā*, с армянским формантом множественного числа *k'*), где концентрированы наибольшее количество топонимов от арм. *agew/areg* «солнце» и следов древнего культа бога солнца. Местные уезды Вайоц дзор и Вайкуник, вероятно, связаны с этнонимом древних жителей востока озера Ван, народа *biai* (читать: *Vuāy/Vāy*, который в армянском отражается как *Vay*). Этот народ Ванской области, вероятно, переселился в Сюник в начале первого тысячелетия до нашей эры под натиском урартов.

REFERENCES

1. **Acharyan H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 1, Er., EPH hrat., 1942 (In Armenian).
2. **Adonts' N. G.**, Armenia v epoxu Justiniana, S. Petersburg, tipografiya Akademii Nauk., 1908 (In Russian).
3. **Aghabekyan M.**, Hay-urartakan stugabanakan ditarkummer, "Patmabanasirakan handes", 2013, N 1 (In Armenian).
4. **Alishan Gh.**, Sisakan, Venetik, Sb Ghazar, 1893 (In Armenian).
5. **Arut'yunyan N. V.**, Toponimika Urartu, Er., AN Arm. SSR, 1985 (In Russian).
6. **Arut'yunyan N. V.**, Korpus urartskix klinoobraznyx nadpisej, Er., "Gitut'yun", 2001 (In Russian).
7. **Awetik'ean G., Siwrm'ean Kh., Awgerean M.**, Nor bargirk' haykazean lezui, Venetik, Sb Ghazar, 1836 (In Armenian).
8. **Bobokhyan A. A.**, Vaspurkan'e Haykakan lernashkharhi bronz-erkat'edaryan mshakut'ayin zargats'umneri hamakargum, "Hayastani mayrak'aghak'ner'e", I, "Van", Er., HH GAA hrat., 2013 (In Armenian).
9. **Cymburskij V. L.**, Grecheskij glagol ταρχώω 'pogrebaju' i maloazijskij mif o porazhenii boga pobeditelja, "Vestnik drevnej istorii", 2007, N 1 (In Russian).
10. **Diakonov I. M.**, Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu, "Vestnik drevnej istorii", 1951, N 2 (In Russian).
11. **Diakonov I. M.**, Predistorija armjanskogo naroda, Er., izd. An Arm. SSR, 1968 (In Russian).
12. **Diakonov I. M.**, O nekotoryx napravleniyax v urartskom jazykoznanii i novyx urartskix tekstax, "Drevnij Vostok", N 5, Er., 1988 (In Russian).
13. **Dilbaryan N.**, Marmnamaser nshanakogh bařerits' ařajats'ats' teghanunner'e Hayastanum, "Banber Erevani hamalsarani", 1993, N 2 (In Armenian).
14. **Eremyan S. T.**, N. Mař'e ev VII dari hayots' "Ashkharhats'oys't'e", Mař'e ev hayagitut'yan harts'er'e, Er., HSSH GA hrat., 1968 (In Armenian).
15. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.**, Indoevropskij jazyk i indoevropejcy, Tbilisi, Mecnieroba, 1984 (In Russian).
16. **Grekyan E. H.**, Biainili-Urartu: petut'yun ev hasarakut'yun, Er., MS, 2016 (In Armenian).
17. **Ghap'ants'yan G. A.**, Istoriko-lingvisticheskie raboty, t. 2, Er., AN Arm. SSR, 1975 (In Russian).
18. **Ghap'ants'yan G. A.**, Urartui patmut'yun, Er., EPH hrat., 1940 (In Armenian).
19. **Hakobyan T., Melik'-Bakhshyan S., Barseghyan H.**, Hayastani ev harakits' shrjanneri teghanunneri bařaran, hat. 1, Er., EPH hrat., 1986 (In Armenian).
20. **Harut'yunyan S. B.**, Hay ařaspelabanut'yun, Beyrut', "V. Seřtean", 2000 (In Armenian).
21. **Hmayakyan S. G.**, Vani t'agavorut'yan petakan kron'e, Er., Hayastani GA hrat., 1990 (In Armenian).
22. **Hovhannisyanyan L.**, Hayereni iranakan p'okhařut'yunner'e, Er., GA hrat., 1990 (In Armenian).
23. **Ivanov V. V.**, Anatolijskie jazyki. Drevnie jazyki Maloj Azii, M., "Progress", 1980 (In Russian).
24. **Jahukyan G. B.**, Hayots' lezvi patmut'yun: naxagrajyn darashrjan, Er., GA hrat., 1987 (In Armenian).
25. **Jahukyan G. B.**, Hayeren stugabanakan bařaran, Er., "Asoghik", 2010 (In Armenian).
26. **Khach'ikyan M. L.**, Xurritskij i urartskij jazyki, Er., AN Arm. SSR, 1985 (In Russian).
27. **Melikishvili G. A.**, Musasir i vopros o drevnejšem ochage urartskix plemen, "Vestnik drevnej istorii", 1948, N 2 (In Russian).

28. **Melikishvili G. A.**, Nairi-Urartu, Tbilisi, AN Gruz. SSR, 1954 (In Russian).
29. **Melikishvili G. A.**, Urartskie klinoobraznye nadpisi, M., AN SSSR, 1960 (In Russian).
30. **Nikonov B. A.**, Vvedenie v toponimiku, M., Nauka, 1965 (In Russian).
31. **Petrosyan A. Y.**, Hayots' azgatsagman harts'er, Er., "Antares", 2017 (In Armenian).
32. **Petrosyan A. Y.**, Hin hndevropakan odz-vishapë haykakan avanduyt'um ev vishap k'arakot'oghnerë. Vishapë hek'iat'i ev irakanut'yan sahmanin, Er., HAI (In Armenian).
33. **Petrosyan A. Y.**, Khet'ereni hetk'er Haykakan lernashkharhi arevelk'um ev harav-arevelk'um, Khaldyan zorut'yamb... hodvatsneri zhoghovatsu nvirvats Boris Piotrovsku tsnndyan 100-amyakin, Er., HH GAA hrat., 2010 (In Armenian).
34. **Petrosyan A. Y.**, Otrazhenie indoevropskogo kornja *wel- v armjanskoj mifologii, "Vestnik obshestvennyx nauk Arm. SSR", 1987, N 1 (In Russian).
35. **Petrosyan A. Y.**, Urartakan glkhavor astvatsneri eryakë ev petut'yan ishkhogh vernakhavi tsagman khndirë, "Patmabanasirakan handes", 2002, N 2 (In Armenian).
36. **Petrosyan S. G.**, Gnuni nakharakan tohmi ev ginu pashtamunk'i shurj, "Patmabanasirakan handes", 1999, N 2-3 (In Armenian).
37. **Petrosyan S. G.**, Merdzsevanyan ts'egheri miut'yunë Haykakan lernashkharhum, "Patmabanasirakan handes", 1976, N 1 (In Armenian).
38. **Piotrovskij B. B.**, Iskusstvo Urartu, Leningrad, izd. Gos. Ermitazha, 1962 (In Russian).
39. **Piotrovskij B. B.**, Vanskoe carstvo, Er., izd. Vostochnoj literatury, 1959 (In Russian).
40. **Srvandztyants' G.**, Erker, hat. 1, Er., HSSH GA hrat., 1978 (In Armenian).
41. **Tirats'yan G. A.**, **Areshyan G.**, Hnagitut'yunë ev Urartu-Hayastan problemë, "Patmabanasirakan handes", 1990, N 3 (In Armenian).